# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«14» փետրվարի 2023 թվականի N 11-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՊԱՄՈՆՏԱԺՎԱԾ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող ապամոնտաժված հենասյուները տարիների ընթացքում աստիճանաբար ենթարկվել են կոռոզիայի և համայնքի կարիքների համար դրանց հետագա օգտագործումը դառնում է ավելի ծախսատար և ոչ նպատակահարմար: Հաշվի առնելով վերոգրյալը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի պարտականությունները կատարող Հ.Մխիթարյանի դեկտեմբերի 22-ի թիվ Կ/Բ-80 զեկուցագիրը և Գյումրի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող ապամոնտաժված թվով 481 (չորս հարյուր ութսունմեկ) հատ տարբեր տրամաչափի հենասյուներն օտարել աճուրդային եղանակով:

2. Հիմք ընդունելով «Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին պատկանող ապամոնտաժված հենասյուների շուկայական արժեքների գնահատման 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 12222221 գնահատման հաշվետվությունը՝ հենասյուների մեկ տոննայի համար աճուրդի մեկնարկային գինը սահմանել 180 000 (մեկ հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (25)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Վ.Սամսոնյան
Գ.Մելիքյան
Մ.Սահակյան
Տ.Հովհաննիսյան
Ա.Հովհաննիսյան
Ն.Պողոսյան
Գ.Պասկևիչյան
Խ.Վարաժյան
Ս.Հովհաննիսյան
Հ.Ասատրյան

Ս.Խուբեսարյան
Վ.Մկրտչյան
Ա.Բեյբուտյան
Հ.Նիկողոսյան
Զ.Միքայելյան
Ե.Խանամիրյան
Լ.Մուրադյան
Վ.Հակոբյան
Կ.Սոսյան
Գ.Մանուկյան
Ս.Ադամյան
Կ.Մալխասյան
Կ.Ասատրյան
Ն.Միրզոյան
Հ.Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԿԱՐԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ

ք. Գյումրի
«14» փետրվարի 2023 թվական